




ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏԾԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՆԻ ԳԻՏԱԿԱՆ

1843-1898

ՀԱՅՈՐ ՄԵ

ՅԱՆՈՒԱՐ

ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆ

ԱՐԱՋԱՄ ԲԱՋԱՆԱՅ Կ. ՊՈԼՍԵՅԻ

Ժամանակակից Տիգրանակերտցի Աւետի-
քին, և անոր պէս մինչեւ ցայժմ տնտեսութեան
մնացեալ, հետաքնին, լաւ եւս, բնաբնին
տննէ և գրիչ մի է՝ Արարահամ քահանայս,
նուազ գիտուն քան զառաջիկան, բայց եզա-
կան և նշանաւոր ի պրականութեան մերում,
իր սիրած, դիտած, ընտրած և գրած առ-
արկային համար, որ է Կենդանութեան
բիշն: Ռաւիկ գրուած, այլ կրնայ ըստիլ
ինքնագիր և իսկատիւ: Վասն զի մինչեւ
հիմայ այս բնական գիտութեան վրայօր յա-
տուկ գրող մի (պուշէ եղած ըլլայ) բայց

յայտնուած չէ ի հայս. Միթիթար Գոշ և
իրեն հետեւողք՝ բարոյականին նկատմամբ յի-
շած և յայտնած են, ինչպէս բուսոց՝ նա և
քանի մի կենդանեաց բնութիւնը, մէկ երկու
առողով. բժշկագիրը այլ աւելի, մանաւանդ
նոխագոյնն Ամիրտովլաթ, պատճառաւ անոնց
բժշկական կամ դեղական օգտութեանց. սա-
կայն Արարահամ միայն օգեր է ամենայն
ցեղ կենդանեաց վրայօր գրել, կարճ կամ
երկար, և շատ իր տեսութեամբ և զննու-
թեամբ, և ոչ՝ կամ շատ քիչ՝ ի զրոց.
Թերեւս ունիւր Ամիրտովլաթայ գրածները,
բայց չէ յիշած և ոչ առած անոնցմէ. միայն
կենդանեաց նկարագրութեանէն դուրս՝ նիւթոց
վրայ գրածէն առած է, նոյնպէս և ուրիշ
քանի մի բժշկական և բնական իրաց, ինչ-
պէս են կաթի, միգի և մսի տեսակը. ետքի
(մսի վրայ) գրուածն անկատար ճեպ զորցը

հետ. իրաւ՝ անկէ ետեւ այլ երկու թուղթ կայ, սկիզբէն և վերջէն պակասաւոր, հիւանդութեանց անուանց բացատրութիւն, բայց օտար ձեռքի գիր կ'երեւի :

Արքայաճառ վրայոց ուրիշ ծանօթարար չունենալով՝ շատ շնորհակալ պէտք է ըլլանք իրեն, որ իր գրչոյիւր սկզբան իր անձին հաւաստօտ ծանօթութեամբ մի տայ, որ է այս .

« Պատմութիւն Անասնոց և Գազանաց ,
« Չորրորտանեաց , Սողոմոն և Թիւնաւորաց ,
« Թուրոնց և Մարդկան , Մոլային Չկանց
« և անանոց և գազանաց , և այլ ժըժմա-
« կաց ծովու և ցամաքի . Արարեալ իմաստնոցն
« և հաքիմոցն (բժշկաց) ճարտարացն առա-
« ջնոցն , զընտրութիւնն և զշահն և զէնն(զեան) .
« և թէ՛ ո՞ր աշխարհ կու լինին , կամ ո՞ր
« ծով կու սնանին , զրեալ են իմաստնոց :
« Չոր ծովովեալ վեց ազգ լեզուաց , Հայոց ,
« Հոռոմոց , Ֆրանկաց , Առաբաց , Պարսից
« և Թուրքաց , բազում բանիւ և աշխատու-
« թեամբ՝ Արքայաճառ քահանայս կոստանդի-
« նուպոլիս մայրաքաղաքէն , վասն օգտի ու-
« սումնայսիրացն : Արդ աղաչեմ զձեզ , հայրք
« և եղբարք իմ , յորժամ կարդայք կամ օ-
« բինակէք , յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղօթմ
« ձեր յետնախնայի իմաստնափրացան , զԱր-
« քայաճառ քահանայն , և զհայրն իմ կոչէ-
« մի , և զամենայն արու(առու)արեան
« մերձաւորս իմ : Տէրն մեր Քրիստոս ի
« միւս անգամ գալստեան իւրոյ զձեզ յիշէ ,
« ի յալակողմեան դատուն արժանի առնէ .
« և զերանաւէտ ձայնիւն զձեզ կոչէ , և
« արքայութեան արժանի առնէ . ամէն : Ըս-
« կիսքն արարի թղթն Հայոց Ռկ (1644-2) .
« յոյս ունիմ առ Աստուած որ և ի Հոգին
« սուրբ , որ աւարտ հանից , և խաղաղու-
« թեամբ կատարեցից » :


Այս յիշատակէն զուրա՝ միայն մէկ յիշատակ մ'այլ ծանօթ է ինձ՝ մեր հեղինաւիկին , յորում՝ իր ճօր անունն այլ յիշուի , այն այլ իր ձեռք գրուած է , իբր 28 տարի առաջ՝ Ոսկիփորիկ զբքի մի մէջ՝ որ զտուի ի մեծ գրատան Բարիգու . և է այսպէս , արձակ և ոտանաւոր , Բենիկ վարդապետի Աղօթագրոց համար ըսելով . « ԹՎ (13) տարի է որ ցատաղին հաներ և ապա կատարեր

« եմ . զի Ռկ (1584-5) թղթն սկսայ և
« ՌԽԸ (1609-10) կատարեցի կարողու-
« թեամբն Աստուծոյ , և աղօթիւք Յեսուանց
« Գրիգորի և Բենիկ սուրբ վարդապետին ,
« Փառք համալոյ և մի աստուածութեան ,
« . . . , կարողութեամբ Ս . Հսրոյն , որ
« զՍրբաբաղկա աւարտեցին ձեռքս և մատու-
« ցին ի միասին .

Միտքս այլ ի յետին երկուսկին .
Եւ թէպէտ գովելի չէ զիւր սորին ,
Այլ զիւրընթերց և գիտողին .
Չոր աղաչեմ ընդ երգեցողին
Ետնաեալս յիշէ ի յաղօթին .
ՉԱրքայաճառ քահանայ նուաստ անձին . . .
Չմարմնաւոր մեր ծնողին ,
Հօրքս խօնայ կուլեմիորին ,
Մօրս՝ հաճի մայր Եղաղութին ,
Այլ և եղբայրս իմ Սինանին .
Օրինակիս մեզ շնորհողին
ՉԴանիէլ քաջ ըստունին .
Հանգուցեցոցն համայնին ,
Եւ ամենայն ազգատոհմին .
Չանարժանիս ուսուցողին
Տէր Միւլիսեղ կրօնաւորին
Եւ ամենայն ազգատոհմին ,
Հետ այս քրոջս աշխատողին . . .
Ամենեցուն մասն ի բարին ,
Եւ իմ գծողին հետ եղիցին » : . . .

Անշուշտ ուրիշ կուլամիր է Աւետարանի մի յիշատակարանի մէջ իբրեւ հանգուցեալ յիշուած , յամի 1552 , որ կու պարտաւոր « Կուլամիրի որդին Տէր Կարապետն՝ յա-
« մենայն տարի կուլամիրի հոգոյն՝ զգում մի
« զգինի բերէ , Աւետարանին համար բերէ » :
Բայց կրնայ Արքայաճառ հայրն ըլլալ « Կու-
« լամիր զպիր » մի , որ յիշուի ուրիշ գրոց մէջ , որ կայ անոր մօտ 1545 թուականն :

Արքայաճառ զրաժ յիշատակարանաց ոճէն և սառազրութենէն կրնայ գուշակուիլ իր հայրենի լեզուի գիտութեան չափն . իսկ միւս յիշեալ հինգ լեզուաց՝ որով կ'ուզէր կենդանեաց անունները գրել , աւելի պակաս է եղեր գիտութիւնն . վասն զի բաց ի թուր-
քարէնէ՝ հազիւ մէկ երկուքին օտար լեզուով



անունները յիշած է. բայց ամենուն համար այլ պարագայ տեղ թողած է թղթին վրայ, որ թերեւս յետոյ ո՛ր և է կերպով գտնէ և գրէ. սակայն չէ ըրած: Ասոր հակառակ՝ շատ տեղ ի լուսանցս երեսաց գրքին (որ փոքրիկ գիրքով է, 400 երես, իւրաքանչիւր 15 տողով), յետոյ աւելցուցեր է նոր գիտելիքներ. քանի մի տեղ այլ գրութիւն աւելած է, թուի թէ օտար ձեռքով՝ ուր որ աղթարական բանի շոշորդ կայ, և անանկ թանձր թանաքով ծեփած է, որ անկարելի է ծածկուածը բանալ: Օտար լեզուօք կենդանեաց անունները չգիտնալն՝ զարմանք չէ, բայց ոչ նոյնպէս երբեմն հայերէնն այլ չգիտնալն, որոյ տեղ թուրքաբէն գնէ. գուցէ առ ժամն չէ յիշած և յետոյ այլ մտապէր է գրել հայերէն ճատրակ անունը, և միայն գրէ « Ղուրի՛ թուրքի բառով, այսպէս Սարելի « տեղն այլ՝ Ղարայ տաւուք, թուրքի բառով »: մեր սովորաբար Սոխակ կոչածին այլ՝ կ'ըսէ, « Հայերէն Պըլպու... թուրքաբէն « Պուլպու », և այլն: Բայց այս պակասութիւնները ներքին կ'ընեն՝ կենդանեաց բնագրութիւնը, յորս (թողլով քանի մի ուստի հմայական կարծիքները), կ'երեւի բաւական ճանաչողութիւն և հմտութիւն. տեղ տեղ այլ իր ժամանակին պատահածները, լսածն և տեսածը յիշելով՝ հաճոյական կ'ընէ գրածը: Ուսումնական ոճ, բաժանմունք և կարգ չունի. այլ միայն (առանց յառաջաբանութեամբ իմացընելու) ցեղի վերածած է զկենդանիս, իւրաքանչիւրն՝ ծանօթագոյն կամ մեծագոյն տեսակներէն սկսելով ստորագրել. Ա. Չորքոտանիքն (ովանց մորթոց կամ մուշտակաց վրայ միայն գրելով) կու համրէ 49 կամ 50 տեսակ. Բ. Թաւուռք 44 տեսակ. Գ. Չրային կենդանիք, 12 տեսակ. բայց խառն են զեռունք և միջատք այլ, որով յայտ է շատ պակասաւոր ըլլալն այս ցեղիս կամ բաժնիս. բայց առանձին Դ բաժին մ'այլ ըրած է 8 տեսակ « Երվային ժրմկնացն որ « կենդանիքն », այսինքն են խեցեմորթքն: — Ե. Այլակերպք, սովորաբար Հրէշք կոչուածքն, եթէ մարդ և եթէ կենդանիք, բայց առասպելք են, 13 տեսակ: — Զ. Չկունք, որոց հետ և խեցեմորթք, 48 տեսակ. այս

բաժնիս մէջ Աբրահամ՝ յայտնուի ստոյգ Կ. պոլսեցի, տեղեակ վոսփորի և Մարմարայի աղի ջրոց ձկանց և լուզակաց համեղութեան և անոնց յոյն և թուրք անուանց:

Այս բաժիններէն զորս՝ իրեւ յետոյ գտած առանձին յիշէ համառօտ զկոկորդիլոս Նեղոս գետոյ՝ արաբացի Թրմուսն անուամբ, և Հնդկաց Ուլիխանսի կէտ ձուկն: Դարձեալ, է, քարոզգիրքերէ կամ Բարոյախօսներէ քաղած՝ հինգ վեց կտոր բան քանի մի թուանց և կենդանեաց բնութեան:

Այս բաժիններէն և վերոյիշեալ կաթին, մսի, և այլ, գրութիւններէն զատ, ասոնց պէս ի բժշկարանաց քաղեալ զլուի մի բան, կէս մի բնական՝ կէս բարոյական, « Մարդու « (յ)օղուածոցն օգտութեան և շահաւէժութեան, և այլ գէնն » (ֆեսան): Այս առանձին գրութիւններն գրքին հազիւ յորորդ մասն կ'ըլլան. միւս երեք և աւելի մասերն, իրեւ 320 երես, կենդանաբանութիւնն են. իրեւ 180 կենդանիք են յիշուածքն, որով յայտնի կ'իմացուի՝ թէ համառօտ են ստորագրութիւնքն, և կ'իսէն աւելին Չորքոտանեաց բաժնին է. ասոնց մէջ այլ Աւիւծին, Չիւյն, Շան, և քանի մի այլոց ստորագրութիւնքն երկար են. ամենէն երկայնն է Աղուխոսն, վասն զի մեծ մասն Աղուխոսգրքէն առած առակք կամ զոլոյք են:

Աբրահամ՝ (մեր վերը բնագործնակած) յառաջաբանէն տնիջապէս ետեւ կու սկսի Չորքոտանեաց ստորագրութիւնն Աւիւծէն, իրեւ անոնց թագաւորէն. այսպէս. « Հայ բառով « Աւիւծ. Հոռո՛ բառով. Թառնկ. Թառապ՝ « Էսէտ. Գարսի՛ Եր. Թուրք՝ Աւրան: Եւ « սնանի գազանո այս ջերմային տեղիքն և « ջրարու գետեղերներ, մահաւանդ ի Պաղտատն և Մուսուլն և Շաղ (Տիւրիս) գետ « տու եզերն՝ շատ կու լինին, եւս առաւել « ի Ճէզայիրն, և որ տեղ որ տաք լինի և « ջրային տեղիք՝ անդ կու լինի, և ի Հրն. « գրասան այլ շատ կու լինի: Գազանաց « թագաւոր կոչն իմաստունքն: Գեղին գու « նով կու լինի որպէս զկատու. և է որ վիզն « սեւ մազ կու լինի. ահապատեսիլ. այնոր « թուրք բառով յեղիտի ասեն. և է որ վիզն « առանց մազով կու լինի, այնոր Մկնա-

« Եթէ կ'ասեն : Այա մեծութիւնն յիշոյ
« մի չափ կու լինի. ահագնատեսիլ է, մե-
« ծասիրտ է. ուժն ի ձեռնովին է. այլ ա-
« նասնոյ որսն չի հնազանդիր ուտելու, ամօթ
« կու համարի իւրն առաւել հպարտութենէն.
« անչափ մեծասիրտ է՝ որ մինչեւ ինքն չի
« որսայ՝ չի ուտէր. և ոմանք ասեն, թէ
« մեռած անասուն քստանէ կամ միս, որո-
« զայթ կու կարծէ, վասն այն չի ուտեր :
« Եւ դարձեալ, քաղցած աչք չէ՝ որպէս
« զայլ. յորժամ ուտէ և կշտանայ՝ զաւե-
« լորոյն չի ուտեր, և ամբք ֆիստ չի առներ.
« վասն այն անասունք հեռեւանց առիւծուն
« բոլորն շուրջ կու գան՝ որ զիւր որսն ուտէ
« և կշտանայ, և աւելորդքն իւրեանք ուտեն :
« վասն այն Սեականջ՝ անուն չորբոսանի
« մի կայ (Քորեմի?) նման աղուեսուն. կ'եր-
« թայ հեռեւանց, վայրի անասունքն, այծ և
« սղար (սլիսար) և եղունքն, զին և իցեն,
« խոտեցանէ զնոսա. և նոքա կու փախչին.
« և առիւծն՝ քարանցատակն կու պահուի,
« և նոքա չեն կարեր տեսնել զնա, վա-
« զելով կու անցանին, և նա կ'որսայ զնո-
« սա, և պատտեալ օտւէ մինչեւ որ կշտա-
« նայ, և թողու զաւելորդն և երթայ. և
« զայ Սեականջովին անասունն՝ ուտէ, մինչեւ
« որ ինքն այլ կշտանայ. և գան այլ անա-
« սունքն ուտեն, և նոցա աւելուածն թռչունք
« ուտեն, և նոքա այլ կու կշտանան, և այլ
« աւելորդքն՝ սողունք և մեծդք ուտեն : Եւ
« դարձեալ, Առիւծն անչափ մեծասիրտ է և
« անհնազանդ, որ կին մարդ տեսանէ և
« կամ սլառաւ, զեն չի աներ, չի հաւանիր,
« և զկինն՝ այլ մարդու տեղ չի համարիր :
« Եւ այլ, թէ մերկ մարդ աեսանէ անցանի
« և երթայ, և զեն չի առնէ, մի թէ (բայց
« երթէ) երկու և երեք օր անօթի կեցեալ
« իցէ :

« Խոնամածա է բնութեամբ. երբ ծնանի
« զվորուն իւր՝ որպէս մեռեալ անկանի կու-
« թունն երեք օր, և զայ որձն, անչափ
« քստան (սրգան) և լան մինչեւ երեք օրն,
« ապա բանայ կորունն զաչքն և կենդանա-
« նայ. և նոքա ուրախացեալ ելեալ որս անեն,
« իւրեանց զպէտան հոգան : Եւ դարձեալ,
« մարդասէր է, և քան զամենայն զապանս

« առաւել կու ընդելանայ մարդոյն : Եւ
« յորժամ քուն լինի՝ կատարեալ չի քներ,
« և երկմիտութեամբ կու քնի, զաչքն չի
« խփեր կատարեալ. և զիշերն չի քնիր՝ այլ
« շրջագայի և որս կու անէ. վասն այն
« ասէ առաքեալն Քրիստոսի Պետրոս, թէ
« թշնամին ձեր սաստանայ իբրեւ զառիւծ շրջի,
« կամի կլանել զձեզ : — Եւ թէ էգն կամ
« որձն հիւանդանայ, և մէկն կու ծառայէ
« նմա, և երթայ մէմուն (կապիկ) կու որսայ
« և բերէ որ ուտէ և ողջնայ : Եւ այլ.
« երթայ ի գետեզեբըն, Խաչիփառ կու որսայ
« և ուտէ, և այնիւ կու ողջնայ, Աստու-
« ծոյ կամօքն : Եւ թէ մէկն մեռանի՝
« միւսն նստեալ վարանի և լայ իբրեւ զմարդ
« և սուք առնէ. առաւել հոքս լինալուն՝
« մոռնայ զինքն և անօթութենէն կու մե-
« ռանի : Եւ թէ հիւանդանայ կանաչ՝ խոտ
« ուտէ և զմաղձն զօրս ձգէ, և այնիւ ա-
« ռողջնայ. և մէմունի միւս ուտէ կամ թե-
« շիփառ, այնիւ առողջնայ. և ոմանք ա-
« սեն, թէ զայլուն միւսն այլ ուտէ և ա-
« ռողջնայ : — Եւ ընդելանայ հետ մարդուն.
« ապա (թէ) անինայ հարկանես՝ նենդ կու
« պահէ, ժամանակ կ'որսայ որ զտանէ և
« զքեզ պատառեալ սատակէ : Եւ թէ քա-
« շասիրտ է և զօրեղ՝ կարես ի վերան հըծ-
« նուլ և զերկու ականջն պինտ բռնել, յաղթել
« կարօզ ես. զի իբրեւ զկատու կու կըմկտի
« և ոյծն չի ֆնար. զի լկամ է նմա ականջն :

« Եւ խաչիաթն (օգուտ առիւծուն) այս է.
« Ի վերայ միթոյն նստիս հանապաղ՝ զեղ է
« սընկանն... բժշկի Աստուծով : Այնչափ մե-
« ծասիրտ է... թէ յորժամ ինքն որսայ այծ,
« էշ և այլ անասնոց պատառէ զորովայն,
« մէնակ զսիրան ուտէ և զարիւնն ծծօէ...
« Եւ յորժամ կրակ տեսանէ տեղի մի վա-
« ռած, չի գայր, հեռեւանց կու հայի և
« հեռեւանց կու շրջագայի. և սիրուն կու
« անցանի ի ֆնասակարութենէ և ի չարու-
« թենէն, Եւ թէ մարդս լուռ և հեզաբար
« կանկնի և անմեղութեամբ հայի, կու ան-
« ցանի կ'երթայ, և չար չի աներ. քանզի
« առատասիրտ է և խոնամածու. եւս առաւել
« մերկ մարդն ամենեւին չի գայր և չի հնա-
« զանդիր, անցանի և երթայ : — Ասեն,

« Թէ ի Մուսուլ քաղաքն առիւծուն աճուն՝
« զիշերն այլ մարդն զուրս չի ելանէր, այլ
« կանայք երթան, թէ շուր և այլ իրք պի-
« տանի լինայ. զի զկանանց ազգն՝ մարդոյն
« տեղ չի գնէր: Թէ քարամբ կամ փայտիւ
« քշեն զնա պառաւքն՝ փնաս չի առնէր
« նոցա, թողու և երթայ: — Էլ աչքն՝
« զիշերն իրբու զմամ լոյս կու տայ. և յոր-
« ժամ՝ նաւաւարքն ծովեզերն Զն՝ (ցից)
« հարկանեն և նաւ կապին, և իւրեանք
« երթան ի նաւն, զայ առիւծն և տեսանէ
« զձիծն և զնաւն կապեալ, նստեալ հեռե-
« ւանց պահէ, և զաչքն խփէ որ աչիջ՝ լոյսն
« չի տեսանեն և չի զիտենան. և յորժամ
« նաւաւարկն ի ցամաք ելանեն՝ որ արձակեն
« զնաւն ի ձիծէն, յայնժամ որսայ և պա-
« տառէ զոռոս, զարիւնն ծծէ, և զսիրտն
« միայն ուտէ: — Ոմանք ասեն, թէ սպի-
« տակ խօսողին (աբաղաղ) և սիրամարգին
« ձայնէն զարհուրի և կու փախի. զարմանք
« այս է, որ այլ անասունքն ի ձայնէն նորա
« զարհուրին և ահուն արիւն կու մի են. և
« նա խօսողին և սիրամարգին ձայնէն կու
« փախի »:

« (Օղոտն) (Արիւծու). Թէ ակոսն ի հետոյ
« պահու, կամ ցաւած ակոյայիւ վրայ բռնես,
« ակոյադ չի ցաւի: Էլ թէ իւր իրանն՝ քիչ
« մի մարդ ուտէ՝ քաջասիրտ լինի. և իւր
« միջի եղն՝ պիվաւորիմ (Թանջախտ քսես՝
« ողջանայ. և թէ իւր եղն երեսդ քսես,
« ամենայն պատառողք զազանք ի քէն փախ-
« չին. և թէ եղն առն մի լինի, մկունք
« և կարիճք այն տեղացն փախին: Էլ թէ
« երկու աչիջ միջի եղն երեստ օծնեն, ի մէջ
« մարգկանց ահարկու երեւիս, և ումեքէ չի
« վախես: Էլ թէ իւր ձեռքն վրադ պահես,
« պատառող զազանաց ահ չի կրես. և թէ
« հանապաղ իւր մորթուն վրայ նստիս՝ պէ-
« վայսըն և սունկն ողջանայ Աստուծով: Էլ
« թէ որ մարդն՝ զող կամ շերմն բռնէ իւր,
« առիւծուն մորթուն վերայ պառկեցընեն և
« ծածկեն որ քուրճի, փարատի շերմն,
« Աստուծով »:

« Էլն զօրաւոր է և ուժեղ քանց առիւծն.
« յորժամ իրար կու ձգեն եզն և առիւծն
« և կռուլեցընեն, եզն կու կապեն պարա-

« նա, և զառիւծն ի վերայ կու թողուն
« առանց կապ. և թէ կարէ առիւծն պորթալն
« (թր. պիտլիք, երիկամունք) բռնել կամ ի
« վերան հեծնուլ, կամ յետեւանց զձրէրն
« խածանել, ապա կարէ յաղթել և պատա-
« ռել զեզն և սպանանել. և թէ ոչ կարէ
« այնմ տեղացն բռնել, եզն, եղջիրաւն
« հարկանէ յորովայնն առիւծուն և սատակէ
« զնա. ապա թէ եզն առանց պարանաւ
« թողուն, ամենեւին առիւծն չէր կարեր
« մօտենալ եզանն. զի անչափ է ուժն եզանն
« քան զամենայն յորքստանիսն »:

Այս ստորագրութեան եզերքն այլ տեղ
տեղ յաւելուածք կան, կամ հեղինակէն կամ
ուրիշէ գրուած ինչպէս, « Թէ առիւծուն ակոսն
« փորք տղայոց լիզն կապեն, այլ ակոսցաւ
« չի տեսանէ. — Թէ առիւծուն մորթուն
« կտոր մի ի մէջ կուամշին գնես, ցեց չի
« ուտէ, Աստուծով: — Էլ թէ առիւծուն
« մորթն քերեն և անօսրացընեն և նաղու-
« ռայ կամ քոս (նուագարանք) հարկանեն,
« ի ձայնէն նորա անասունքն փախին. և
« թէ ձին լսէ նաղարային ձայնն՝ ահուն
« հիւանդանայ: Առիւծն իմանայ գճոտ օր-
« սորդին և զգոյն իմանայ, և ազոյն հար-
« կանէ զերկիր. և յորժամ յորս ելանէ
« առիւծն՝ յանկարծակի առնու գճոտ օր-
« սորդին, սեմի և երկուցեալ փախի »:

Աւելագրող բնութիւնն՝ բարոյյախօս այլ կ'ըլ-
լայ, գրելով. « Խրատէ զմեզ զազանս այս,
« որ զմեզ՝ իրբու պիշիւքն զնեմք և զմիտս
« մեր կռեմք, որ տգիտութեամբ չի յաղ-
« թուիմք ի թշնամուն, մինչեւ յառաջ իմա-
« նամք, թէ կարող եմք յաղթել, և ապա
« յառաջ երթամք և կռուեմք, և երկմիտ
« չի լինիմք. զինչ որ գործեմք կամ պատե-
« րազմիմք հետ թշնամոյն՝ յԱստուած ապա-
« ինելով անեմք և ոչ ի յոյժն մեր: — Տես
« Աստուծոյ ոգորմունքիւնն, որ անչափ ուժով
« զազանն՝ որ մրուչէմ (մրջիւնն) կու վա-
« տուցընէ զնա, զի մրուչէմն անչափ ի
« վերայ կու թափին, խածառեն, մինչեւ ի
« մահ տանին զնա: Երբ կորունն որ ծնանի,
« մուլման ահուն՝ ի մէջ ջրալից և չաւնդաւ
« չից տեղաւն կու ծնանի, որ մուլէմն չի
« կարեր զալ: Տես զփեղն, որ անչափ ա-

« հազիւն և մեծ դազանն , որ ճանճք և մե-
« ժեծք կու ժողովին ի վրան , քիթն և յա-
« կանջն մտանեն , և անդոր մնայ անշափ
« զորութենէն » :

Շարայարեկի



ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՇԱՐԱԳՈՐԴԻՆԻ ԵՄԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Ա.

ԵՂԻՇԷԻ ութ յեղանակաց երբ շա-
րադրուած ըլլալը , կարևոր է գիտնալ՝ ոչ
միայն պատմական տեսակետով , այլ ևս վասն
զի ազգային դպրութեանց արտադրած ամե-
նէն զեղեցիկ գորարին , ինչպէս և մեր նախնի
մասենադրական ամենէն մեծ հանճարոյն վե-
րաբերեալ խնդիրը , արժանի են մանրակրկիտ
հետազոտութեանց :

Այլ և այլ վկայութիւններ և աւանդու-
թիւններ կան , հինգերորդ դարու առաջին
կիսուն մէջ՝ վաթսունի չափ երիտասարդաց
ուսումին աւարտելու համար յեղեհիա , յԱ-
զեքսանդրիա , յԱթէնս զրկուած , և Եղիշէի
ալ անոնցմէ մէկն եղած ըլլալուն : Թեոա-
գայ զրիշք կը յիշատակեն անոր երկասի-
րութիւնը իբրեւ ականատես պատմչի : Դժուա-
րին է ևս զուրս ձգել զայն ի հինգերորդ
դարէ . քանզի ամէն ազգի մէջ նշանաւոր
մատենագիրը իրենց կրած ազգեցութիւննե-
րով , զազափարօքն և քնով մէկ մէկ դարու
զրոյմն ունին :

Բայց այդ ամէն վկայութիւններն և ա-
ւանդութիւններն՝ որք ընդհանրապէս բաւական
կը սեպուին մատենագրաց ժամանակը հաս-
տատելու , մենք առ այժմ իբրեւ շեղեալ պի-
տի համարինք . և հինգերորդ դարու հետ ու-
նեցած պատշաճութիւնն ալ՝ պիտի ենթա-
դենք կասկածելի կամ առարկելի : Պիտի
քննենք Եղիշէի պատմութիւնը իբրեւ թէ
վանքի մը դարանէն առաջին անգամ այսօր

երևան ելած ըլլար , և ամենէին յիշատա-
կութիւն մը ունեցած չըլլայինք անոր նկատ-
մամբ :

1. Եղիշէ զիւր պատմութիւնը կ'ընծայէ
Մամիկոնեան Դաւթի երիցու , որոյ հրա-
մանաւ կը գրէ , և որ , ըստ Փարպեցւոյ՝ ներ-
կայ գտնուած էր ի ժողովին Արտաշատույ :

2. Առաջին յեղանակին սկիզբը կ'ըսէ .
« Ահա ոչ ըստ կամաց արտասուլից ողբովք
ճառադրեմք զբազում հայրուածս , յորում պա-
տահեցաք և մեք իսկ ականատես լինելով » :

3. Թագկերտի նկարագիրն ըրած ատենն
ալ կը դնէ . « Զանցս իրացն պատմեմ . . .
ոչ ի կարծ ընդոսուցեալ , և ոչ ի լուր զար-
թուցեալ . այլ ես ինքնին ի տեղուջն պա-
տահեցի և ակսի , և շուայ զձայն բարբառոյ
յանդգնաբար խօսելով . իբրեւ զհոյմն սաստիկ՝
զի բախից՝ զծով մեծ , այնպէս շարժէր և
տատանէր զամենայն բազմութիւն զօրաց
իւրոց » . (էջ 27) : — Սարայրի ճակատին
ալ ներկայ գտնուած էր . « Որպէս յայսմ ժա-
մանակի տեսաք աշօք մերովք , զի զնոյն նա-
հատակութիւն նահատակեցաւ և աշխարհս
Հայոց » . (էջ 172) :

4. Ղեւոնդեանց մահուան նկատմամբ պատ-
մածները շատ էր խուժաստանցի վաճառա-
կանէ մը , որ ներկայ գտնուէր էր անոնց նա-
հատակութեան յԱպար աշխարհի (Խորասան) .
(էջ 322) :

5. Ութերորդ յեղանակին մէջ ալ . « Իսկ
կանայք երանելի առաքինեացն և կասկեղոյն
և անկեղոյն ի պատերազմին , ընդ ամենայն
աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ
կարեմ . զի բազում այն են զոր ոչ գիտեմ ,
քան թէ պիտիցեմ : Զի հիմք հարիւրով
չափ յականէ յանուանէ ձանաչեմ . ոչ որ
միայն աւագազոյնքն էին , այլ զբազումս ի
կրտեալուցն անոնի » . (էջ 354) :

6. Որ կարևորագոյն է քան զվերոյ-
գրեալսն . Եղիշէ երրորդ յեղանակին սկիզբը
կը զրուցէ մեզ , թէ ինքն ալ Պարսկաստան
գնացեր էր վարդանայ և այլոց նախարարաց
հետ , որք կանուներ էին ի Դուռն , եպիս-
կոպոսաց անյեհներ պատասխանայն վրայ . կր
հասկցնէ մեզ ևս թէ այլոց հետ Թաղկերտի